| ԹԵՄԱՆԵՐ<br>ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐ | ՓՈՒԼ |
|---|---|
| ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ՇԱԲԱԹ | 1 |
| ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԻՔԸ ԵՒ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ | 2 |
| ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ (ՄԱՍ 1) | 3 |
| ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ (ՄԱՍ 2) | 4 |
| ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ 15-20-ՐԴ ԴԱՐ | 5 |
| • 1-ին ընթացիկ առցանց քննութիւն<br>ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԵՒ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ | 6 |
| ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱՒՈՐՈՒՄԸ | 7 |
| ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ (1920-1991 թթ.) | 8 |
| ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ | 9 |
| ԱՐՑԱԽԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՆՈՒԱՃՈՒՄԸ: ԼՂՀ ԿԱՅԱՑՈՒՄԸ. ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ | 10 |
| ՀԱՅ ՍՓԻՒՌՔԸ | 11 |
| • 2-րդ ընթացիկ առցանց քննութիւն<br>• Աւարտական աշխատանքի պաշտպանութեան պաշարների վերբեռնում | 12 |
| • Աւարտական առցանց քննութիւն<br>• Աւարտական աշխատանքի պաշտպանութիւն | 13 |


ՀՀ, ք. Երեւան, Ալեք Մանուկեան 1,

ԵՊՀ 2-րդ մասնաշէնք, 5-րդ յարկ

Հեռ.՝ + 374 60 71 00 92

Ել. հասցէ՝ dl@armin.am

www.armin.am/am/herausucum

www.facebook.com/IASofYSU


ՀԵՌԱՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ



ԵՊՀ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

### *ՆՊԱՏԱԿ*

Ծրագրի նպատակն է ապահովել համապատասխան լսարանի համար թեմատիկ մասնագիտական կրթութիւն՝ կիրառելով հեռաուսուցման եւ դասական ուսուցման համակցուած մեթոդները:

### *ԼՍԱՐԱՆ*

Ծրագրի մասնակիցներ կարող են լինել ՀՀ, ԼՂՀ եւ Սփիւռքի մեր հայրենակիցները: Ծրագրի իւրաքանչիւր խմբում կարող է մասնակցել առաւելագոյնը տասը ուսանող: Իւրաքանչիւր խումբ ունի իր դասախօսը, ով իրականացնում է խորհրդատուական բնոյթի աշխատանք:

### *ԹԵՄԱՆԵՐ*

Ծրագիրը բաղկացած է մէկ ճանաչողական, տասը թեմատիկ փուլեր ընդգրկող դասաժամերից, որոնք հաւասարաչափ բաշխւում են տասնմէկ շաբաթների միջեւ:

### *ՔՆՆԱՇՐՋԱՆ*

ա) Երկու ընթացիկ եւ մէկ աւարտական առցանց քննութիւնները, որոնք անցկացւում են համապատասխան ձեւաչափով, նախապէս սահմանուած ժամերին: Առաջին ընթացիկ թեստային առցանց քննութիւնը տեղի է ունենում ուսուցման 5-րդ շաբաթուայ ընթացքում, երկրորդ ընթացիկ թեստային առցանց քննութիւնը տեղի է ունենում 12-րդ շաբաթուայ ընթացքում, իսկ աւարտական թեստային առցանց քննութիւնը տեղի է ունենում 13-րդ շաբաթուայ ընթացքում:

բ) Աւարտական աշխատանքի պաշտպանութիւնն անցկացւում է 13-րդ շաբաթուայ ընթացքում՝ բանաւոր ընթացակարգով, նախապէս ձեւաւորուած յանձնաժողովի միջոցով, համապատասխան ձեւաչափով, նախապէս սահմանուած ժամերին:

### *ԳՆԱՀԱՏՈՒՄ*

| ԱՆՈՒԱՆՈՒՄ | ԵՐԲ | ՀԱՐՑԵՐԻ ՔԱՆԱԿ | ՄԵԿ ՀԱՐՑԻ ՄԻԱՎՈՐ | ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻԱՎՈՐ | ԿՐԵԴԻՏ |
|---|---|---|---|---|---|
| 1-ին ընթացիկ առցանց քննութիւն | 5-րդ շաբաթ | 40 | 0.1 | 4 | 1 |
| 2-րդ ընթացիկ առցանց քննութիւն | 12-րդ շաբաթ | 40 | 0.1 | 4 | 1 |
| Աւարտական առցանց քննութիւն | 13-րդ շաբաթ | 100 | 0.1 | 10 | 2 |
| Աւարտական աշխատանքի պաշտպանութիւն | 13-րդ շաբաթ | - | - | 2 | 1 |
| ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԻՇ | | | | 20 | 5 |

### *ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ*

Ծրագրի շրջանակներում ուսուցման ամբողջական ժամկէտը կազմում է տասներերք շաբաթ, եւս չորս շաբաթ ամփոփիչ կրկնութեան համար:

### ՎԿԱՅԱԿԱՆ

Ծրագրի մասնակիցները ստանում են ԵՊՀ-ի կողմից տրուող աւարտական վկայական:

### *ԻՆՉՊԷ՞Ս ԳՐԱՆՑՈՒԵԼ*

Հեռաուսուցման կրթական ծրագրում գրանցուելու համար անհրաժեշտ է.

- www.armin.am/am/herausucum-Hayots-Patm-Himnahartser-About-program յղման տեքստի մէջ «տուեալների թերթիկ» արտայայտութեանը վերբեռնուած word փաստաթուղթը ներբեռնել,
- լրացնել ներբեռնուած փաստաթղթի ելեկտրոնային տարբերակը՝ կցելով անձնագրի կրկնօրինակի սքանավորուած տարբերակը,
- ուղարկել տուեալները dl@armin.am–ին,
- պատասխան նամակով Դուք կը ստանաք ուսման վճարի եւ այլ քայլերի հետ կապուած կարգաւորումներ: